Պարույր Սևակ

Առաջնորդի մոնումենտը

Այս հինավուրց հայտնի հողում,
Ուր Արարատն է շողշողում,
Երազանքով ու տքնությամբ բույն է հյուսել մի ժողովուրդ,
Որ սիրում է մուրճ ու մանգաղ, խոփ ու բրիչ, բահ ու գրիչ,
Որ հավատի երգ էր հյուսում իր ցավերից ու վշտերից,
Որ կերտում էր, կառուցում էր, համր քարին լեզու տալիս,
Իր հույսերին տալիս էր ձև, իր հավատին՝ ամուր խարիսխ....
Այսպես՝ դարեր նա կառուցեց, կառուցածն իր տեսավ կործան,
Նա մարտնչեց հերոսաբար, ընկավ, նորից վեր բարձրացավ,
Եվ անրջեց իր հողը սուրբ, իր ապագան փրկված տեսնել
Աղետներից, կործանումից ու ձեռքերից դաժան ու սև:
Եվ նա տեսավ: Մեծ Ռուսիայից Հոկտեմբերյան այգը ծագեց,
Ալիքվելով՝ Նոյեմբերին նա այստեղ փայլատակեց:
Հզոր կամքով մեծ Լենինի, Ստալինի ձեռքով պողպատ
Իմ ժողովուրդն արյունաքամ, իմ ժողովուրդն սպիապատ
Վերածնվեց, նորից կերտեց ու կառուցեց՝ հավատացած,
Որ այուները էլ չեն ջարդվի, կամարները չեն թափվի ցած,
Որ իր բախտի, իր գալիքի լայն կամարը հրաշալի
Խարսխված է եղբայրության սիրաշաղախ այունաշարին,
Որ կառուցման իր սեգ ոգին ազատված է արդեն հավետ,
Որ խոյանք է նրան տալիս մի հանճարեղ ճարտարապետ,

Մի մարդ , որին պարտական է իր ներկայով և գալիքով....
Եվ ժողովուրդն իմ շինարար , բազմադարյան իր տարիքով
Երեսնամյա ջահելության իր կորովով անհատնելի,
Իր կառուցման ամբողջ ուժով, ճարտարությամբ իր մատների,
Պայծառ՝ նման իր երազին և անխորտակ՝ իր հույսի պես
Հրաշագործեց մի սեգ Քանդակ, մի Մոնումենտ չքնաղ ու վեհ:
Կառուցում չէ դա հասարակ՝ կերտված քարից ու շաղախից,
Մեր երազն է դարձել սեգ սյուն, մեր հավատը՝ հեղյուս ու խիճ:
Պատվանդան է դարձել նրան այն ամենը բարձր ու վսեմ,
Ինչ ժողովուրդն իմ հինավուրց պահպանել է հոգում լուսե,
Եվ արդ, ահա,երբ փրկվել է իր այսօրը և ապագան,
Մարմնավորել իր հույսերը, երազանքներն անապական,
Իբրև պալատ կամարակապ և սյունաշար գեղաքանդակ
Դարձրել է սեգ պատվանդան, դրել նրա ոտքերի տակ:
Այդ փառահեղ պատվանդանը չորս վերելքով է բարձրացել.
Ասես նրանք չորս հարկեր չեն, այլ չորս փուլ են կացութաձև,
Որոնց վրա կանգնել է նա՝ Առաջնորդը և հայրը մեր,
Որպես կյանքի խորհրդանիշ, կոմունիզմի համբավաբեր:
Կանգնել է նա պատվանդանին ողջ հասակով, դյուցազնատիպ,
Նա, ում հայր ենք մենք անվանում, իսկ զավակները մեր՝ պապի:
Դեռ երեկ էր՝ նրա կյանքի յոթանասուն անցած տարին
Նշեց համայն հողագնդում ամեն օջախ ու ընտանիք:
Սակայն բոլոր ջահելներից դեռ ջահել է նա մնացել.
Ջահելությունը մարդկային այդ նրա մեջ է մարմնացել:
Գալիք բոլոր սերունդների կորովը կա նրա բազկում,
Ջահելության ուժն ու գինը ամենից լավ նա է զգում:
Կոմունիզմը՝ հողագնդի ջահելություն են անվանում,
Իսկ դռները կոմունիզմի նրա հուժկու ձեռքն է բանում:
Ահա ինչու՝ կանգնած է նա այնպես ջահել ու առնական,
Ազատության մարտիկի պես՝ համազգեստով զինվորական:

Գլխաբաց է: Եվ գլխարկը կարծես նոր է գլխից հանել,
Ողջունել է կարծես հենց նոր կամ ողջույններ է ընդունել:
Եվ գլխարկը ձեռքին է դեռ, դեռ չի ծածկել... ինչպես ծածկի,
Երբ ողջույն են տալիս նրան ոչ թե միայն իմ քաղաքի,
Ոչ թե միայն իմ աշխարհի բոլոր մարդիկ մոտ ու հեռու-
Ջահելները մեր խանդավառ, աղջիկները մեր թովռուն,
Մեր հայրերը, մայրերը մեր, զավակները մեր սիրասուն:
Ջերմ ողջույն են տալիս նրան բազմագույն ու բազմալեզու
Բոլոր մարդիկ՝ հողագնդի գոտիներից անծայրածիր.
Բոլոր նրանք, որ ցանում են ու մնում են առանց հացի,
Բոլոր նրանք, որ այլևս նավերը չեն բեռնաթափում,
Իմանալով, որ հակերում արթուն մահն է սուտ մրափում.
Բոլոր նրանք՝ որդեկորույս մայրեր տանջված, քույրեր տրտում,
Կորստի ցավն իրենց հոգում, վշտի բեկորն իրենց սրտում.
Բոլոր նրանք, որ զարթնել են , թշնամու դեմ ելել ոտի-
Նեգրը, որի բախտը սև է, ավելի սև, քան իր մորթին,
Բազմաչարչար աֆրիկացին, որ Կոչի տակ խաղաղության
Թանաքոտած իր մատով է դրոշմում իր երազը թանկ.
Կորեացին, որ իր հողը իր արյունով է պաշտպանում,
Սեգ չինացին, որ կռվում է Տիբեթական լեռնաշխարհում
Եվ չինական վիթխարի տան ետնադուռն է ամուր փակում
Նրանց առաջ, որ դոլարով այդ դռներն են անվերջ թակում.
Եգիպտոսը, ուր համրացած սֆինքսներն ու բուրգերն արդեն
Քիչ է մնում առնեն լեզու և օտարին դուրս վռնդեն,
Հին Հելլադան, խեղճ Հելլադան, որտեղ հյուծված ու մերձիմահ
Ջնդաններում մորթվող իրենց որդիների կյանքի համար
Հույն մայրերին լոկ մնում է մի վառ հույսով նստել գրել
Արցունքներից շաղված նամակ և ուղարկել նրան՝ Կրեմլ....
Ջերմ ողջույն են հղում նրան Չինաստանից մինչև Հռոմ.
Նորվեգական սառույցներից մինչ սառցապատ Երկիրն Հրո:

Ողջունում են նրան մարդիկ սրտով մաքուր, անապական,
Ողջունում են պատմությունը, ողջունում է ինքն ապագան...
Ահա ինչու գլխաբաց է ու գլխարկն է բռնել ձեռքին,
Կարծես ողջույն է ընդունում և ողջունում է ամենքին:
Կանգնած է նա բարձր ու վսեմ՝ համազգեստով զինվորական
Կանգնած է նա՝ գլուխը բաց, այնպես ջահել ու առնական:
Իսկ նրա շուրջ՝ ծառ ու ծաղիկ, կանաչ անտառ, զբոսարան,
Իսկ նրա շուրջ՝ աղբյուր, առու, իսկ նրա շուրջ՝ գյուղ ու ավան:
Անապատ էր երեկ այստեղ՝ ծածկված դեղին աղվամազով,
Քամու շնչից քաղաք խուժող թանձր փոշով ու ավազով:
...Ուր հասնում է միտքը նրա՝ ընդհատում է ավազն իր չուն,
Եվ սունկի պես՝ նոր ավաններ, քաղաքներ են հանկած աճում
Ահա այնպես, ինչպես հիմա, երբ Երևանը առնացի
Իր բազուկներն է փաթաթում բլուրների պարանոցին՝
Միշտ ձգտելով, տարածվելով դեպի վերև, դեպի հեռուն,
Որ այս Քանդակը բարձրանա մի օր արդեն իր կենտրոնում...
Եվ հայրական գուրգուրանքով նայում է նա Երևանին,
Պալատներին նրա շքեղ և արձանին այն անվանի:
Այնտեղ Լենինն է բարձրանում պատվանդանի վրա քարե,
Տիտանական իր կեցվածքով, լայն ճակատով իր հանճարեղ:
Նայում է նա դեպի այստեղ՝ բարձունքները Քանաքեռի,
Այստեղ է նա կարծես հառել սուր հայացքը իր աչքերի:
Նայում է նա ուղիղ այստեղ այնպես, կարծես ցույց է տալիս
Իր հանճարի ժառանգորդին, քեզ - Առաջնորդ, քեզ - Ստալին,
Մեզ - աշխարհում միակ մարդուն, ում սիրով է նա վստահել
Իր գործը մեծ, իր երկիրը և աշխարհի բախտը ջահել:

XI-XII.1950թ.